» է իրեն խելքին ու տպած գրքերուն համար, որ
» երբոր դուրս կելլէ պտըտելու, ամէնքը կըփա-
» փաքին երեսը տեսնել: Բաղդ ունեցար որ այն-
» չափ ատեն իրեն դիմացը նստար. աս քեզի բա-
» ւական պարծանք է ըսի, ու տեղը ճամբեցի»:

## Ռափայելեան վարժարանին տարեկան քննութիւնը:

Այն ուրախալի յոյս որ ամէն ազգասէր անձինք ունին մեր ազգային ուսումնական յառաջադիմութեանը վրայ, նորոգուեցաւ մեր սրտին մէջ աս տարի ալ, և կըփութանք ծանուցանել նոյն ազգասիրաց որ իրենք ալ ուրախակից ըլլան մեզի:

Վենետիկի Ռափայելեան Վարժարանին տարեկան քննութիւնները լմընցան նաև աս տարի ու յառաջադէմ աշակերտաց պարգևաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ սովորական ոճով: Օրերով առաջ աշակերտները առանձին քննուեցան Վարժարանին Խնամակալաց ժողովքէն, ու իրենց յառաջադիմութեան վիճակները որոշուեցան. իսկ աս ամսուն 5ին առաւօտանց նոյն Վարժարանի մատրանը մէջ Առաջնորդը հանդիսաւոր պատարագ ըրաւ 'ի յիշատակ հոգւոյ բարերարին, այսինքն հանգուցեալ աղա Էդուարդ Ռափայել Ղարամեանին: Աղօթակից էին՝ բաց 'ի վարժարանի ներքին և արտաքին դասատուներէն, ու օտարազգի ծանօթներէն, նաև մեր վանքի միաբանները և աշակերտները: Պատարագէն ետքը գոհութեան երգեր ու աղօթքներ եղան առ Աստուած, որ ամենայն առողջութեամբ և յաջողութեամբ հասուց աշակերտները նաև աս տարուանս, խնդրելով որ ասկէ ետքն ալ անպակաս ըլլայ իր Աստուածային ողորմութիւնը անոնց վրայ: Անկէ ետև ժողվեցան ամէնքը Վարժարանին մեծ սրահը, և հոն պատմական և բարոյական ուսմանց դասատուն, գեղեցիկ ճառ մը խօսեցաւ. հասկցընելով աշակերտներուն, թէ՝ ան կարծիքն որ շատ անգամ լսուած ու շատին միտքը տեղ ըրած է, իբր թէ մեր ազգը ազգատեաց ու անմիաբան է, անհիմն է ամենևին. և ազդու պատճառներով՝ ազգին հին և նոր պատմութիւնները մէջ բերելով, և ուրիշ ազգաց հետ ալ բաղդատելով հաստատեց որ մանաւանդ թէ մեր ազգը շատ ազգասէր ու միաբանասէր երևցած է ամէն ժամանակ[1]:

Ատենախօսութենէն ետքը իւրաքանչիւր աշակերտաց բարեկրօն վարուց և ամէն մէկ ուսմանց կողմանէ ինչ աստիճանի գովելի ու քաջավարժ ըլլալը կարդացուեցաւ, և ըստ այնմ աշակերտներէն եօթը հոգի առաջին մրցանակի արժանի եղան, և եօթը երկրորդ մրցանակի՝ ամէնն ալ վաւերական վկայականներով. մնացածներն ալ քաջալերուեցան աւելի ջանք ընելու, որպէս զի եկող տարի իրենք ալ առնուն մրցանակը:

Առաջին մրցանակի արժանացողները՝ իրենց յառաջադիմութեան աստիճանին նայելով՝ ասոնք են.

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՃԵՊԵՃԵԱՆ.
ՊՕՂՈՍ ՄԵՐՃԱՆՃԵԱՆ.
ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ.
ԳԱՅԵՏԱՆՈՍ ՄՈՇՈՐՈՅ.
ԱՂԵՔՍԱՆԴՐ ԽՕՔՍԻՒՋԵԱՆ.
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՆԻԿԵԱՆ.
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՍԱՅԵԱՆ.

Պարգևները բաշխելէն ետև, հանդիսին նախագահը համառօտ և ազդու յորդոր և քաջալերութիւն խօսեցաւ աշակերտաց ու վարժապետաց, յիշեցընելով Առաքելոյն ըսածը, թէ "Որ սերմանէ առատութեամբ՝ առատութեամբ և հնձեսցէ, և որ սերմանէ ճշդելով՝ ճշդելով և հնձեսցէ". և բարեմաղթելով որ եթէ վարժա-

[1] Աս ճառը թէպէտ գրաբառ է՝ բայց մենք յաջորդ թերթերուն մէջ կրնանք քաղելով ամփոփել իբրև ազգային խնդիր, և ազգասիրաց հաճոյ:

պետաց աշխատանքը և եթէ աշակերտաց ջանքը յաջորդ տարին հազարապատիկ պտղաբեր ըլլայ։

## Արուեստ պաղ առնէն ջուր սառեցընել։

Առ 20 դրամ ամոնիաքի[1] աղ, 18 դրամ աղբորակ[2], 28 դրամ սոտայի արջասպ[3]. զատ զատ փոշի ըրէ ու ամէնը մէկէն կամաց կամաց խառնէ ութը դրամ ջրով, բարակ գաւաթի մը մէջ։ Քանի որ աս աղերը կը հալին, ջերմաչափդ խօթէ աս հեղուկին մէջ, կը տեսնաս որ ջերմաչափին սնդիկը կը ցածնայ և զրոյէն ալ վար կիջնայ. թէ որ ուրիշ բարակ շիշի մը մէջ ջուր լեցընես ու շիշով հանդերձ աս գաւաթին մէջը խօթես, շիշին մէջի ջուրը կը սառի։ Աս փորձը աւելի յաջող կըլլայ, թէ որ 5 մաս ամոնիաք, 5 մաս աղբորակ, 8 մաս սոտայի արջասպ և 16 մաս ջուր գործածես, վ՟ զի ան ատեն զրոյէն գրեթէ 21 աստիճան վար կիջնայ ցրտութիւնը հարիւրամաս ջերմաչափին վրայ։

Աս փորձով կը տեսնաս որ (ինչպէս 35 երեսն ալ երկու խօսքով զուրցեցինք) մարմինները իրարու հետ բաղադրուելու ատեն, քիմիական ներգործութեամբ իրենց ջերմութիւնն ալ կաւելնայ կամ կը պակսի. աս յատկութիւնը հիմակուան բնալոյծները կուտան ելեքտրականութեան կամ քիմիական ձգողութեան, որ երկու զանազան մարմիններ իրարու քով գալով կրնան ունենալ։ Իսկ աղերէն շատը ցրտութիւն կը պատճառեն՝ երբոր իրարու հետ այլեւայլ բաղադրութ՟ խառնուին. մենք հոս դնենք տախտակ մը, թէ ո՛ր տեսակ աղերը, ինչ չափով խառնուինէ ցրտութիւն կը պատճառեն, և թէ այլեւայլ բաղադրութեամբ ինչ աստիճան ցրտութ՟ կունենան հարիւրամաս ջերմաչափին վրայ։

| | | |
|---|---|---|
| Աղ ամոնիաք | 5 մաս | ցրտութ՟. 21°, 11 |
| Աղբորակ | 5 | |
| Ջուր | 16 | |
| Աղ ամոնիաք | 5 | 25°, 50 |
| Աղբորակ | 5 | |
| Սոտայի արջասպ | 8 | |
| Ջուր | 16 | |
| Ամոնիաքի բորակուտ [1] | 1 | 26°. |
| Ջուր | 1 | |
| Ամոնիաքի բորակուտ | 1 | 23°, 88 |
| Սոտայի ածխուտ [2] | 1 | |
| Ջուր | 1 | |
| Սոտայի ծծմբուտ [3] | 3 | 26°, 11 |
| Բորակային թթ. [4] ջրախառն. | 2 | |
| Սոտայի ծծմբուտ | 5 | 26°, 11 |
| Ծծմբային թթ. ջրախառն | 4 | |
| Ձիւն | 3 | 30°. |
| Ծծմբային թթ. ջրախառն | 2 | |
| Ձիւն | 8 | 33°. |
| Քլորեան թթուուտ [5] | 5 | |
| Ձիւն | 7 | 34°. |
| Բորակային թթ. ջրախառն | 4 | |
| Ձիւն | 3 | 46°. |
| Փոթաս | 4 | |

Աս ետքի չորսին բնական պաղութիւնը արդէն զրոյ ըլլալով, բաղադրուելէն ետքը ունեցած պաղութիւնին սեպելու է զրոյէն վար։ Ասոնց նման դեռ շատ բաղադրութիւններ կան որ հոս դնելը առ ժամս աւելորդ է։

1 Hydrochlorate d' ammoniaque.
2 Nitrate de potasse.
3 Sulfate de soude.

1 Nitrate d' ammoniaque.
2 Carbonate de soude.
3 Sulfate de soude.
4 Acide nitrique.
5 Acide chlorique.

ՎԵՆԵՏԻԿ. Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ